ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

# ՈՒ Ղ Ե Ր Ձ

«01» հունիսի 2025 թվականի

## ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի երեխաներ, թանկագին ծնողներ, հարգելի բարեկամներ ջերմորեն շնորհավորում եմ տարվա ամենալուսավոր տոնի՝ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ:

Այս տոնը մի համամարդկային ուղերձ է՝ խաղաղ, անհոգ մանկության, սիրով ու հոգատարությամբ շրջապատված միջավայրի կարևորության մասին:

Երեխաները մեր ապագան են՝ համայնքի զարգացման ու առաջընթացի շարժիչ ուժը: Նրանց երազանքներն ու ժպիտները մեզ պարտավորեցնում են ստեղծել ավելի բարեկեցիկ, լուսավոր և հարմարավետ պայմաններ:

Ուրախությամբ պետք է փաստել, որ այս տարի հունիսի 1-ը մեր համայնքում նշում ենք նոր շնչով:Մեծ սիրով վերաբացում ենք ատրակցիոններով վերազինված, հիմնանորոգված ու բարեկարգված կանաչապատ այգին, որը կոչված է դառնալու երեխաների սիրելի վայրը՝ դաձնելով նրանց մանկությունն ավելի գունեղ և երջանիկ պահերով լի:

Սիրելի՛ փոքրիկներ, թող ձեր սրտերում միշտ ապրի սերը, հույսը, հավատը՝ լուսավոր ու խաղաղ ապագայի հանդեպ:

Մաղթում եմ ձեզ ուրախ և անմոռանալի օր՝ հագեցած վառ ու գունավոր տպավորություններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ